ինձ ծանձրալի չլինէր, եւ աւելացրուց, մի փոքր հանաքի ձեւ տալով իր խօսքերին:

— Դու երեխայութիւնից իրասածի (յամառ) տղայ էիր, Ֆարհատ: Ես գիտեմ, թէ քեզ կարողանամ հանգստացնել, Մարօին չեմ կարող. նա աւելի կապը-կտրած է: Գնացէք, ինչպէս ուզում էք, այնպէս արեցէք, ես էս գործիցը ձեռքերս լուանում եմ...

— Մարօն ուզում է, որ քո կամքովն լինի:

— Ուրեմն, թող Խաթունին էլ իր հետ վեր առնէ:

— Դարձեա՞լ «կովը կովի հետ»...

Յասոն ծիծաղեց: Ծիծաղը նրա բարի երսի վրայ փոխոեցաւ ժպիտի եւ նա ասաց.

— Քոյրս քեզ շատ է սիրում, Ֆարհատ:

— Ի՞նչ գիտես:

— Նա ինքն ասաց ինձ:

— Թող սիրէ, աւելի լաւ:

— Բայց դո՞ւ:

— Ես՞... Մենք սիրում էինք մէկ մէկու, երբ դեռ երեխայ էինք:

— Այն սէրն ուրիշ էր:

— Սէրը միշտ սէր է. նա չի փոխւում:

— Դու կարդացողի գլուխ ունես, Ֆարհատ, քեզ հետ դժուար է խօսելը, — ասաց Հասօն եւ բարձրացրուց իր խարազանը, սկսեց քշել արօրին լծած եզները:

Ես հեռացայ:

Զարմանալին այն էր, որ մի քանի շարականներ սովորած լինելով, այն ժամանակ ես ուսումնական էի համարւում: Ի հարկէ, Հասօի աչքում ամէն տիրացու կշիռ ունէր թէեւ ես ինքս այժմ ծիծաղում եմ իմ այն ժամանակոայ գիտութեան վրայ:

Հասօի արտը բաւականին հեռու էր գիւղից: Ես շտապում էի շուտ տուն հասնել, յայտնել Մարօին եղբօր համաձայնութիւնը. այդ պատճառով ընտրեցի թէեւ դժուարին, բայց աւելի կտրուկ եւ կարճ ճանապարհը: Հարկաւոր էր միայն իջնել ձորը, անցնել մի քանի բլուրներ, վերջին բլուրի վրայ արդէն կանգնած էր ծերուն որսորդի տունը: